

Մորս՝ Սիլվա Ղարագյոզյանին՝ իր ամուսնու հավատարիմ և աննկուն ուղեկցին...

ՂՈՒԿԱՆ ՉՈՒԲԱՐՅԱՆ


1923 - 2009

Այս իրատարակությունը
իրականացվել է Ղուկաս Չուբարյանի
ընտանիքի՝ նրա կնոջ, որդու,
դստեր, թոռների, հարսի, ինչպես
նաև ընտանիքի ընկեր և բարեկամ,
Ղուկաս Չուբարյանի տաղանդի
երկրպագու ակադեմիկոս
Յուրի Շովիաննիսյանի մեծ բարոյական
և նյութական աջակցության շնորհիվ:

Данный альбом обязан своим
существованием усилиям семьи
Гукаса Чубаряна: его жены, сына,
дочери, внуков, невестки, а также
большой моральной и финансовой
поддержки академика Юрия
Оганесяна, друга, родственника и
почитателя таланта Гукаса Чубаряна.

This album was made possible by the
efforts of family of Ghukas Chubaryan:
his wife, son, daughter, grandchildren,
daughter-in-law, and by the great moral
and financial support of Academician
Yuri Oganesyan, friend, relative and
admirer of Ghukas Chubaryan.

ISBN 978-9939-831-29-9
© Անուշ Չուբարյան, 2012



Վահան Ստեփանյան/PanARMENIAN Photo - “Մենք” նախազծի համար:

Մարդու հայեցակարգը Ղուկաս Չուբարյանի դիմաքանդակային գործերում

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՔՈԹԱՆՁՑԱՆ
Նկարիչ, արվեստագիտության թեկնածու



Մարտիրոս Սարյան՝ «Ղուկաս» ճեպանկար 1931թ

Այս հրապարակումով ուզում ենք անդրադառնալ անցյալ դարի երկրորդ կեսի հայ նշանավոր քանդակագործ, Յայաստանի ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի խորական անդամ Ղուկաս Չուբարյանի դիմաքանդական գործերին և դրանցում առկա լոկ մի խնդրի՝ մարդու հայեցակարգին: Այսինքն՝ ուզում եք խոսել մարդու կերպարի հանդեպ հեղինակի անհատական մտապատկերի առանձնահատկությունների և նրա դիմանկարչական պլաստիկայի մեկնաբանման բնույթի մասին:

Քանդակագործի մեծաքանակ դիմաքանդակներից ընտրել ենք ընդամենը մի քանիսը, այդ թվում՝ ոչ միայն զուտ դիմանկարային գործերը, այլև պատմական նշանավոր անձերին նվիրված հուշարձանները: Յայտնի է, որ կերպարվեստում մարդու կերպարի մեկնաբանման առանձնահատկությունները բոլոր ժամանակներում ձևավորվել են նկարչի ապրած միջավայրին բնորոշ մի շարք հանգանաքների՝ պատմաքաղաքական, հասարակական-ընկերային, առաքինաքարոյագիտական ու գեղագիտական ազդեցությունների բերումով: Յետևաբար, ուզած նկարչի գործերը, դրանց ձևավորման ու զարգաց-

ման միտումներն առավել պարզ ըմբռնելու համար ոչ պակաս կարևոր է ծանոթությունն այն պատմաքաղաքական միջավայրին, որում ստիպված էր ապրել ու ստեղծագործել նա:

Ղուկաս Չուբարյանը ծնվել է 1923 թվականին Երևանում և այստեղ էլ 2009 թ. կնքել իր մահկանացուն: Նրա երկար ու բեղմնավոր ստեղծագործական կյանքն անցել է մի երկրում, ուր մշակույթի, մասնավորապես արվեստի հարցերը բավականին խստորեն վերահսկվում էին իշխանությունների կողմից:

Այսօր մեր խնդիրը միտված չէ չափազանց հետաքրքիր ու կարևոր այն հարցի լուսաբանմանը, թե ինչպես տոտալիտար ռեժիմը, որ 70 տարուց ավելի իշխում էր երեխնի մի հսկայական պետության մեջ, արտացոլվել է նրա արվեստում: Այդ հարցը միանշանակ չէ: Քանզի այսօր արդեն հստակ է, որ ի հեճուկս գաղափարական մանլիչի ճնշման, մեր պատմության խորհրդային շրջանում բազմաթիվ վարպետների՝ գեղանկարիչների, քանդակագործների և գրաֆիկների կողմից ստեղծվեցին զգալի բարձրորակ գեղարվեստական գործեր, որակ, որին, ցավոք, հասու չէ դեռևս նկարիչների արդի սերունդը, որը, թվում է, ստեղծագործական ազատության համար ավելի նպաստավոր միջավայրում է ապրում:

Ղուկաս Չուբարյանը խորհրդահայ այն վարպետներից է, որոնց ստեղծագործությունը չի ենթարվել գաղափարական գրաքննությանը: Ավելին, չնայած գաղափարական ընդհանուր ճնշմանը, ինպես և անձնական ճակատագրի դժվարին շրջադարձին, նրան հաջողվեց իր ստեղծագործություններում լինել ներքուստ ազատ (որքան հնարավոր էր այդ տարիներին) և ստեղծագործել իր քաղաքացիական խղճին համահունչ: Փորձենք պատասխանել այն հարցին, թե դա ինչ-պես հաջողվեց նրան և ի՞նչ հանգամանքներ էին նպաստում դրան:

Նկարչի աշխարհզգացողությունը, և համապատասխանաբար նաև նրա կողմից մարդու կերպարի մեկնաբանության առանձնահատկությունները, թեպես շատ բաներով որոշակվում էին վերը թվարկված հանգամանքներով, այնուհանդերձ, ստեղծագործական ձևավորման գործում պակաս դեռ չեն խաղացել իր անհատականությունը, նրա անձնական աշխարհնկալման բնույթը:

Եվ այդ անհատականությունը մի անգամ չէ, որ ընդունացել է տվյալ հանրության կողմից ընդունված գործելակերպի նորմերին՝ երբեմն բացահայտ, իսկ հաճախ է՝ բողարկված: Տոտալիտար պետության պայմաններում նման դիմաքանդակներու հավասարագործ էր



Ընտանեկան լուսանկար, Երևան 1929թ

քաղաքացիական այնպիսի արարքի, որն իր մեջ մարմնավորում էր առավել բարձր բարոյական իդեալներ:

Այդ իդեալներն ապագա քանդակագործը որդեգորել էր դեռևս մանկության տարիներից: Նա ծնվել ու դաստիարակվել էր բարձրակիր մտավորականների ընտանիքում: Ծնողները ժողովրդավարական առաջադիմ հայացքներ ունեցող մարդիկ էին, հետևում էին ազգային ավանդական բարոյական արժեքներին: Նայո՞ Գրիգոր Ղամբարձումի Չուրարյանն անվանի իրավաբան էր, հանրապետությունում հայտնի ու հարգված գիտնական, Երևանի պետական արդյունաբանության միջնադպրոցի պատասխանական աշխատավոր: Նա հայ մտավորականության այն սերնդի ներկայացուցիչներից էր, ովքեր հայրենասիրական պարտի մղումով, ամենածանր շրջանում՝ 20-ական թվականներին, տեղափոխվեցին Ղայաստան, լծվելու հայկական պետականության և ազգային մշակույթի վերածնության գործին:

Ցավոք, Չուրարյանների ընտանիքի բարեկեցիկ կյանքն ընդհատվեց 1937-ին՝ ընտանիքի հոր բռնադատումով, և բնո՞ւմ ընկավ մոր՝ կրկին ոչ սովորական մի անհատականության ուսերին: Ուժեղ, կամային, խելացի և գործնական այս կինը կրթությունը ստացել էր Մոսկվայի կանանց բարձրագույն դասընթացներում: Նա այդ ժամը պայմաններում, որ հայտնվել էր իր ընտանիքը, կարողացավ արժանապատվորեն հաղթահարել ոչ միայն զուտ կենցաղային դժվարությունները՝ ընտանիքի կյանքը նորովի դասավորելով: Նա նաև արեց ամեն բան, որպեսզի մի կողմից պաշտպանի «ժողովրդի թշնամու» զավակներ հայտարարված իր երեխաններին հոգեկան վճասվածքներից, օգնի նրանց չկոտրվելու այդ ժամը խարանից, մյուս կողմից որ նրանք չտրվեն չարանալուն, նույնիսկ նման պայմաններում կարողանան պահպանել մարդկային կարևոր որակները՝ հավատը մարդու, բարու հանդեպ, մերձավորին կարեկից լինեն դժբախտության ժամանակ և ամենագլխավոր՝ պահպանեն ներքին ազատության ու անկախության գագացումը:

Քաղաքագործ Ղուկաս Չուրարյան անձի էության հիմքում ընկած են հենց այս որակները, որոնք և որոշարկել են նրա՝ մարդու բռնության ընկալման առանձնակիրությունը, պայմանավորել նրա դիմաքանակային կերպարների հայեցակարգը:

Բերենք օրինակներ:

Դիտարկենք Չուրարյանի ստեղծագործության ամենաարտահայտիչ գործերից մեկը՝ քանդակագործի մոր՝ Մարթա Չուրարյանի (բրոնզ- 1965) դիմաքանակը: Նկարիչների ստեղծագործություններում մոր կերպարը (այս դեպքում ի նկատի ունենք որոշակի մայրերին և ոչ թե մայրության ընդհանրական կերպարը), ինչպես նաև ինքնանկարը, մոտեցումների բազմազանությամբ և մեկնաբանությամբ, ամենահետաքրքիր թեմաներից են, որոնք կարող են դիտարկվել դիմանկարչական արվեստն ուսումնասիրելիս: Օրինակի համար բերենք այդ թեմայի երկու՝ ըստ էության իրար հակադիր մոտեցում: Արշիլ Գորկու մոր դիմանկար-կոմպոզիցիոն երկակի կտավը, բնօրինակի հետ ունեցած իր ակնհայտ հարազատությամբ, հավաքական: Մոր անկրկնելի մի կերպար է կերտված հոգնոր հագեցածությամբ: Այս գործը կարող ենք համեմատել միայն միջնադպրոցի ամենակատարյալ Տիգրան Սահակյանի պատկերի:

Մեկ այլ գգացում է առաջացնում Դյուրերի մոր հանրահայտ գրաֆիկական դիմանկարը, որն աչքի է ընկնում զարմանալի ռեալիզմով ու կերպարի ծշմարտացիությամբ: Արտաքնապես ոչ գեղեցիկ, տարիքի հետ արդեն այլափոխված դիմագծերի միջից ծեր կնոջ դեմքը փայլատակում է ներքին լույսով՝ ջերմացած նկարչի որդիական սիրով:

Չուրարյանի մոր դիմաքանդակը՝ իր կերպարային լուծմամբ, որոշակի իմաստով նմանվում է վերոհիշյալ դիմանկարներին: Քանդակագործը նույնպես չի թաքցնում մոր հանդեպ ունեցած իր գգացմունքը, և չի փորձել դույզն ինչ իդեալականացնելով պատկերել ծերացած մոր դեմքը, ուր դրոշմված է վերջինիս ապրած դժվարին կյանքի կմիջը:

Այդ դիմաքանդակն ուշագրավ է բոլոր առումներով: Առաջին հերթին դիմապատկերի սրությամբ ու ծշմարտացիությամբ, ինչն ակնհայտ է դաշնում նույնիսկ նրանց համար, ովքեր ծանոթ չեն նախատիպարին: Բնօրինակից հաղորդվող այդ ծշմարտացիությունն ու սրությունը ծեռք է բերվել քանդակագործի պորֆենինալ բարձր վարպետությամբ և դիմանկարչի նրա ձիրքով: Անշուշտ, նրա գործը հեշտացրել է այն հանգամանքը, որ նա հնարավորություն ուներ մոտիկից և երկար տարիներ հետևելու բնօրինակին:

Մյուս կողմից, այդ խիստ անհատականացված դիմաքանդակը կրողն է կին-մայրերի ընդհանրական, հավաքական կերպարի: Այն իր մեջ ներառում է բոլոր թշվառությունների ու փորձությունների, անցյալ դարի առաջին կեսի բոլոր ողբերգական իրադարձությունների՝ պատերազմների, սովոր, կորուստների, հիասքափությունների կմիջը: Նրա դեմքին տեսնում ենք զոհաբերումի ու սիրո, տոկունության ու համբերության արտահայտությունը:


Այդ դիմաքանդակը ժամանակաշրջանի վկայագիրն է, վկայությունը հենց այդ հրաշալի, կենսական խոր ծշմարտությամբ արինքնող ստեղծագործության հեղինակի կենսագրության:

Ինչ վերաբերում է դիմաքանդակի գեղարվեստական լեզվին, ապա այն պարզ է ու զուսպ: Նրա պլաստիկ կառուցվածքն աչքի է ընկնում ամբողջականությամբ, որում չկան ուշադրությունը շեղող դրվագներ (օրինակ՝ մեկնաբանության մեջ կարող էին հարդարում-ներ լինել): Պլաստիկական ծեփվածքի ընդհանուր բնույթը հարում է դասական հնարներին, որոնք բնորոշ են քանդակագործի գեղարվեստական լեզվին ընդհանրապես: Այսպիսով, այս գործի նշյալ որակնե-

ոի ողջ հանրագումարը թույլ է տալիս այն համարել ոչ միայն քանդակագործի, այլև հայրենական ողջ դիմանկարչական արվեստի լավագույն ծեռքբերումներից մեկը:

Մարդու կերպարի լուծման առումով առանձնահատուկ հետաքրքրություն ունի Չուրարյանի՝ Մատենադարանի մուտքի մոտ կանգնեցված միջնադարյան նշանավոր գիտնական, իրավագետ ու օրենսդիր Մխիթար Գոշի հուշարձանը (1967, բազալտ):

Այս քանդակը կերպարային լուծման այն տեսակն է, որ առնչվում է դիմանկարի բնութագրական նյութերի բացակայության հետ (Եթե հաշվի չառնենք դեռ կենդանության օրոք նրան տրված «Գոշ» մականունը, որը նշանակում է քոսա, անմորուս): Նման դեպքերում սովորաբար կերպարը ստեղծվում է բացառապես հեղինակի պատկերացմամբ: Եվ հեղինակը պետք է առաջնորդվի միայն այն գիտակցությամբ, որ իր խնդիրը պատմական անձնավորության արտահայտիչ կերպար ստեղծելը է: Կերպարը մի անձի, որի դերը հայրենական մշակույթի պատմության մեջ քաջ հայտնի է և ըստ արժանվույն գնահատված թե՛ Գոշի ժամանակակիցների և թե՛ մերօրյա գիտնականների կողմից: Այս դեպքում Դուկաս Չուրարյանի բախտը բերել էր: Նրա կողքին էր աքսորից վերադարձած հայրը, որ հրաշալի իրավագետ էր, մասնավորապես՝ տիրապետում էր հայ իրավունքի պատմությանը: Ինանալով այն ամենը, ինչ հայտնի էր Գոշի կյանքի ու գործունեության մասին, նա կարող էր շատ բան հուշել որդուն մեծանուն այս հայորու մարդկային ու ստեղծագործական հուրյան մասին: Յենց սա էլ եղել է քանդակագործի հիմնական ելակետը:



Զախից աջ՝ Հակոբ Իշխանյան, Արտաշես Չովսեփյան, Դուկաս Չուրարյան, ուսուցիչ՝ ՍամՎել Մանասյան, Արամ Ղարիբյան: 1961թ

Նրա մտապատկերում սկսեց հետզիետե ձևավորվել Գոշ տաղանդակոր անհատի, այդ հեռու միջնադարի գիտնականի մասին պատկերացումը: Եվ այդ պատկերացումը որոշակի դարձեց ապագա հուշարձանի գաղափարաբովանդակային հենքը:

Սակայն այդ բովանդակությանը համարժեք պլաստիկայի որոշումները, որոնք կարող էին մարմնացում տալ կերպարին, բավական երկար ծգվեցին: Այստեղ վարպետի մեջ ծագեց սրամիտ ու միանգամայն տրամաբանական մի միտք՝ Մխիթար Գոշի կերպարի ստեղծման համար օգտագործել սեփական հոր դիմապատկերը: Նման որոշումը բավականին արդյունավետ եղավ: Այն օգնեց արվեստագետին ստեղծելու հայ միջնադարյան մեջ օրենսդիր հավաստի կերպարը՝ դիմանկարչական բնույթով դիպուկ, արժանահավատությամբ՝ համոզիչ:

Հուշարձանի պլաստիկ լուծումն իր լակոնիզմով խիստ արտահայտիչ է: Գոշի իրանը՝ զգեստավորված մի թիկնոցով, որը մշակված է խիստ ժուժկալ, ընկալվում է որպես մի հզոր կոթող, մի այուն: Այդ լակոնիզմը թույլ է տվել շեշտադրել քանդակի երկու գլխավոր դրվագները՝ գլուխն ու ձեռքերը:

Մեր դեմ անապատականի մի դեմք է, որ հրաժարվել է ամենայն աշխարհիկից և խորասուզվել իր մտքերի մեջ: Նրա հոգնատանց հայացքն ուղղված է հավերժությանը: Այդ խիստ մողելավորված դիմագծերում հստակորեն արտահայտված են հայկական տիպի առանձնահատկությունները: Գոշի ձեռքին օրենքների ժողովածուն է՝ Դատաստանագիրը, որը մատուցելու ժեստով մեզ է հրամցնում: Պատահական չէ, որ այդ ժեստը զուգորդվում է կանոնական ժեստերի հետ այն ավետարանիչների, որոնք ներկայացնում են Ավետարանի օրենսգիրը: Քանդակագործի կիրառած այս համանանությունը պարզ է ու համոզիչ: Ինչպես Ավետարանը, օրենքների ժողովածուն ևս կոչված է հիմնելու արդարության ու կարգուկանոնի նորմեր:

Այսպես, Մխիթար Գոշի կերպարային լուծման խնդրում Չուրարյանին հաջողվեց բնականորեն իրար ծովել երկու, թվում է դժվարությամբ համատեղվող դիմանկարային արվեստի սկզբունքներ՝ իրական, կոմկրետ մարդու անհատականացված կերպարը պատճական անձնավորության հավաքական կերպարի հետ: Մի բան, որ հուշարձանին հաղորդել է առանձնահատուկ համոզչության և գեղարվեստական ճշնարտացիության ուժ:

Հաջորդ աշխատանքը, որին ուզում ենք անդրադառնալ, «Աղջիկնապատակ» քանդակն է (բրոնզ, 1967): Այս գործի համար բնօրինակ է ծառայել քանդակագործի դուստրը՝ դիմակահամենսի գլխարկով: Սա վարպետի ստեղծագործության ամենաանօվոր գործերից մեկն է: Անսովոր է առաջին հերթին գեղարվեստական կերպարի անսպասելի ծավալապլաստիկական կառուցով՝ ստեղծված բարձր գլխարկի (որը ունի նապատակի գլխի ձև՝ վեր ծգված ականջներով) և մանկական կլորիկ գլխիկի՝ մեկ ամբողջության մեջ վարպետորեն միահյուսումից:

Չուրարյանին հաջողվել է այդ երկու մասերի՝ երկու սկզբների՝ մարդու ու կենդանու համադրությամբ հասնելու այնպիսի մի ամբողջության ու բնականության, որին սկզբնացվես՝ առաջն հայացքից դիտողը ընկալում է որպես ինչ-որ անսովոր, անտեսանելի մի արարած:

Սակայն, եթե զննում ենք աղջնակի դեմքը, տեսնում ենք այդ սքանչելի կերպարի ողջ հրական հիմքը՝ օժտված այնպիսի անկրնելի առանձնահատկություններով և այնպիսի նույր ու դիպուկ հոգե-



Դ. Չուրայրյանը դստերը քանդակելիս, 1978թ

քանական բնութագրումներով, որ այդ դիմագծերն այսօր՝ տարիներ անց, առանց դժվարության ճանաչվում են արդեն երիտասարդ կնոջ արտաքինում: Նրբորեն մշակված այդ դեմքին դրոշմված է հոգեբանական նրբերանգների մի ողջ համախումբ՝ զարմանք, հետաքրքրասիրություն, անսպասելի ժպտալու պատրաստակամություն: Աղջնակն արձագանքում է իր շուրջը կատարվածին միանգամայն անտրոտում զսպվածությամբ, սակայն պատրաստ է նաև դաշնալու աշխույժ ու զվարք տոնի մասնակիցը: Այդ զգացողությանը մեծապես նպաստում է գլխարկի ծավալի, խիստ մազածածկ գլխի կլրուավուն ձևի և մանկան բարակի վզի միջև առկա հակադրությունը, ինչը դիմաքանդակին հաղորդում է դիմամիկ կայունության զգացում և ստեղծում տպավորություն, թե աղջնակը պատրաստ է գլուխը շրջել մեկ աջ, մեկ ձախ:

Այդ դիմաքանդակին բնորոշ անթարույց բանաստեղծականությունն ամենակի բնորոշ չէ քանդակագործի ստեղծագործական որոնումներին: Այն խիստ հազվադեպ է ի հայտ գալիս. թերևս միայն երեխաների կերպարներ մարմնավորելիս, և այդ առումով ամենավառ օրինակը քանդակագործի «Աղջնակ-նապաստակն» է:

Չուրայրյանի այդ սքանչելի ստեղծագործությունը՝ իր հուզիչ քանաստեղծականությամբ, բացահայտում է նրա ստեղծագործական հնարավորությունների ևս մեկ կողմը, որը, ցավոք, շատ քիչ է օգտագործվել:

Չուրայրյանի դիմանկարչական պատկերաշարում առանձնակի տեղ են զբաղեցնում աշխատավոր մարդկանց դիմանկարները: Հետաքրքիր են այդ կերպարների հայեցակարգային լուծումները:

Դայտմին է, որ աշխատավորական թեման կարևոր տեղ էր զբաղեցնում խորհրդային արվեստի գաղափարական ծրագրում. չէ որ երկիրը համարվում էր «բանվորացուղացիական», և շատ հաճախ ամբողջ մի ցուցահանդես համալրվում էր բանվորների ու գյուղացիների հերոսական սխրանքները փառաբանող ստեղծագործություններով:

Չուրայրի համար բուն այդ թեման խորը չէր: Դեռ մանկությունից նա սովոր էր աշխատանքի, որն էլ համարում էր սրբազն պարտականություն: Ուստի զարմանալի չէ, որ նա հաճախ էր դիմում մշակների կերպարները պատկերելուն: Քանդակագործի կերպարների հայեցակարգային լուծումները բնորոշիչ են նրա ստեղծագործությանը և հե-

տաքրքիր հայկական արվեստի պատմության համար:

Կանգ առնենք այդ դիմաքանդակներից առավել նշանակալիներից մեկի վրա, որը հայտնի է «Զոդագործ» կամ «Ասպետը» անուններով: Երկրորդ անվանումը միանգամայն տեղին է, եթե ի նկատի ունենամք քանդակի պլաստիկ լուծումների առանձնահատկությունները և դրա պատկերահամաստային բովանդակությունը: Զոդագործի աշխատանքն ընդգծող դիպուկ բնորոշչէր, որն արտահայտված է նրա գլխի պահպանից վահանակով, քանդակագործի մեջ առաջացրել է անսպասելի գոլգորդում ասպետի սաղավարտի հետ, ինչն էլ հանդիսացել է ուղղորդիչ աշխատավոր մարդու խորապես բովանդակալից կերպար ստեղծելու համար:

«Զոդագործ» առաջին հերթին հիշվում է շնորհիվ երիտասարդ տղամարդու անհատականացված, կենդանի, գրավիչ դեմքի՝ վառ արտահայտված ազգային տիպագծերով:

Բանվորի այս դիմանկարը բարդ ու խորը մեկնաբանություն ունի: Նրա դեմքին կարդում ենք զուսպ, համարյա թաքնված հպարտության ու ներքին արժանապատվության զգացում: Ֆիզիկական հզրորությունը համարված է հոգևոր բարձրության հետ: Գլխի ամուր, ստատիկ դրվածքը նրան հաղորդում է վստահություն իր և իր ուժի հանդեպ: Այդ մարդը ներշնչում է հուսալիության զգացում. նման մարդուն կարելի է վստահել:

Այս կերպարի մարմնավորման մեջ ուշադրություն է գրավում մի առանձնահատկություն ևս: Դա բանվորի դեմքի հոգմածության կմիջն է, որն առանձնակի ծշմարտացիության և հավաստիության զգացում է հաղորդում կերպարին: Այդ տեսակետը, որ խիստ կապված է աշխատանքի թեմայի հետ և իր սքանչելի արտահայտչականությունն է գտնել անցյալի, մասնավորապես՝ 19-րդ դարի շատ նշանավոր նկարիչների (Միլեի, Սանեի, Դեգայի և այլոց) գործերում, խորհրդային արվեստում ընրունված չեր: Քանի որ աշխատանքը, ինչպես գիտենք, «պատվի, հպարտության և հերոսության գործ էր», և հոգմությունը խորհրդային մարդուն թվում է վայել չեր:

Բոլոր նշանն առանձնահատկությունները «Զոդագործի» կերպարին հաղորդում են այն բարդ բովանդակային լիցքը, որը տարբերակում է նրան խորհրդային արվեստում եղած բազում բանվորների ու գյուղացիների դիմանկարների միանշանակ լուծումներից: «Ասպետի»



Հովհաննես Զարդաշյանի արվեստանոցում

Կերպարի մարմնավորման մեջ հստակորեն արտացոլված է Չուբարյանի ստեղծագործությանը բնորոշ մարդու հայեցակարգի բնույթը, որն առանձնանում է խորը մարդասիրական ուղղվածությամբ:

Ուշադրություն դարձնենք այդ գաղափարակերպարային լուծման պլաստիկ մարմնավորման կատարելությամբ: Յնարավորին չափ ընդհանրացնելով քանդակային ձևերը և դրանով հանդերձ չընկենալով սինեմատիկության մեջ՝ քանդակագործը հասել է ընդհանրականի բացարձակ ամբողջականության ու համահավաքության: Դիմագծերը դրվագված են պարզ ու հստակ, աքսենտարմերը, որոնք առավելապես մարմնավորվել են ճանաչելիության չափ, բնականորեն աղերսված են դենքի ծավալի հետ: Չուբարի այս քանդակը նրա ստեղծագործության ծրագրային գործերից է և պետք է դասվի հայկական արվեստի այդ ժամրի լավագույն ստեղծագործությունների թվին:

Վերջին գործը՝ «Սուրբ Եղիշի անունը քո» քանդակը (բրոնզ, 1985), որի մասին կամենում ենք խոսել, անկասկած, Չուբարյանի առավել ուժեղ ու տպավորիչ գործերից մեկն է:

Ելբոր հիշատակը հավերժացնելու միտքը երկար՝ շուրջ չորս տասնամյակ, զբաղեցրել էր քանդակագործին, և այդ ընթացքում նա հասցել էր բավական շատ էսքիզներ ու տարբերակներ ստեղծել:

Երբ 2007 թ.-ին Սամկո-Պետերբուրգի մերձակայքում, ուր հենց պատերազմի սկզբում զոհվել էր քանդակագործի եղբայրը, որոնողները գտել էին Լուսեղեն Չուբարյանի զինվորական անվանիշը: Այդ ժամանակ էլ նա կատարվածը որպես նշան ընդունելով, մտահեցել էր հենց այդտեղ տեղադրել քանդակը՝ այն նվիրելով Լենինգրադի պաշտպանության համար զոհվածների հիշատակին: Ցավոք, քանդակագործին չհաջողվեց իրականացնել իր երազանքը: Ուզում ենք հուսալ, որ քանդակագործի այդ գեղեցիկ մտահեցացումը, ի նշան երախտագիտության, մի օր կիրականացնեն այն մարդկանց հետնորդները, ովքեր իրենց կյանքի գնով ապահովեցին մի քանի սերունդների խաղաղ գոյությունը:


Այս հուշարձանը՝ իր պատկերաբովանդակային ու ձևանությական լուծմամբ, նմանը չունի ոչ խորհիդային և ոչ էլ, որքան հայտնի է, այլ երկրությունից արվեստում:

Հետպատերազմյան շրջանում, նաև վերջին տասնամյակներին,


Դ. Չուբարյանի դիմաքանդակները



Սառա Լեբեդև, 1957թ



Յան Վարաս, 1964թ



Լետ Լանգինեն, 1988թ

Խորհրդային Միության ողջ տարածքում բազմաթիվ հուշարձաններ տեղադրվեցին՝ նվիրված ֆաշիզմի դեմ տարած հաղթանակին. Վիթխարի մոնումենտներ՝ երկրի խոշոր քաղաքներում, ավելի համեստ քանդակներ՝ գյուղերում ու փոքր քաղաքներում: Դրանցում, ինչպես հարկն է, փառաբանվում էին խորհրդային մարտիկների հերոսական գործերը, որոնք փրկեցին ժողովուրդներին ֆաշիզմից:

Այդ հուշարձանները հիմնականում հոյակերտ ու պերճաշուրջ էին: Կային նաև այնպիսիներ, ուր շեշտը դնելով ողբերգականության վրա և հաճախ հիմք վերցնելով «Պիետա» սրբապատկերագրական օրինակը, քանդակագործները պատկերում էին Սորոյ՝ հակված կովում ընկած որդու դիակի վրա (հավանաբար՝ ի նկատի ունենալով «Մայր հայրենիք» հասկացողությունը): Դ. Չուբարյանի ստեղծած քանդակը շատ հեռու է այդ ծեծված օրինակներից: Այդ ստեղծագործությունը ապշեցնող է, ապշեցնող ոչ թե իր չափը մեծ չէ, այլ միանգամայն անսպասելի իր մեկնաբանությամբ, որը գերծ է որևէ հերոսականությունից և կամ արտաքին «գրական» պատմողականությունից: Անենից շատ քանդակն աչքի է ընկնում իր արտահայտչական ուժով, բուն կերպարի խորաթափանցությամբ:

Մեր դեմ մի վտիտ երիտասարդ է, համարյա մի պատաճի՝ սակրած գլխով, ինմամաշ ու տրորված շիմելով, որն ակնհայտ ուրիշ մեկին է պատկանելիս եղել, կեղտոտ, ոչ իր չափերին համապատասխան կոշիկներով: Նա նույնիսկ հրացան չունի, ձեռքին միայն մաշված մի գիշարկ է: Այդ անզեն պատանու հայացքն ուղղված է վեր՝ դեպի երկինք: Ո՞ւմ է ուղղված այդ հայացքը: Յնարավոր է Քրիստոսի նման նա աղոթում է, որ իրեն բաժին չընկնի սպասվող դառը զավարը:

Այսօր, երբ գիտենք, թե ինչ վիճակում էր խորհրդային բանակը պատերազմի առաջին ամիսներին, հասկանալի է ինչ ի նկատի ուներ քանդակագործը:

Այդ գործի ուժը երիտասարդ գիմվորի դիմապատկերի մեջ է: Նշենք, որ ի սկզբանե քանդակագործը չի փորձել նրան հաղորդել իր ելբոր դիմագծերը: Նա ցանկացել է ստեղծել պատաճի զինվորի ընդհամրացված կերպար, որին ամխոճաբար ուղարկել էին հաստատ մահկան:

Պատաճին արտաքուստ գեղեցիկ չէ: Նա խոշոր, կոպիտ քիթ ու-

նի, մեծ, ցցված ականջներ, հաստ շրթումքներ ու մի տեսակ ծանր ծնոտ, սափրած գլուխն էլ ցուցադրում է նրա գանգի ոչ կատարյալ ձևերը: Սակայն երբ նայում են նրա աչքերին, որոնցում վախի ոչ մի նշույլ չկա, այլ միայն թափիծ, զարմանք ու անձայն մի հարց, կերպարն այդ այլակերպվում է: Նա այլևս չի թվում անբարետես, նույնիսկ ըստ էտյան նրա տղեն արտաքինը լցվում է այլ բովանդակությամբ: Մեր դեմ մի գեղեցիկ պատաճի է պարուրված հոգնոր լույսով. անհմաստ կործանման դատապարտված այդ մատաղ արարածի հանդեպ ծագում է կարեւցանքի մի ճնշող զգացում, զգացում, որ նա մեզ հարազատ ու մտերիմ մարդ է:

Երիտասարդի՝ արտահայտչականորեն մեկնաբանված գլուխն արձանի տիրապետող հատկանիշն է. հենց դա է իր վրա կրում բովանդակային ինֆորմացիայի առավելագույն մասը: Իսկ ֆիգուրի մնացյալ մասերի մեկնաբանությունները ենթարկվում են գլխավոր այդ նպատակին: Որպեսզի դիտողի ուշադրությունը սկսեր դեմքի վրա՝ Չուրաբյանը զինվորին պատկերել է բաց գլխով (չնայած ակնհայտ ցուրտ ու սառնաշունչ եղանակին). գլխարկը չպետք է խանգարեն նրան առավելագույն պարզությամբ ու հստկությամբ բացահայտելու կերպարի հոգեբանական տարբեր կողմերը: Դա անկասկած քանդակագործի հաջողված հնարն էր:

Այդ նկատառումով իսկ արվեստագետը սահմանափակվում է բուն իրանի չափազանց գուսապ մեկնությամբ: Շինելը մողելավորված է խիստ գուսապ, ինչի շնորհիվ զինվորի իրանը զ ուրկ է որևէ ընդգծված նյութականությունից: Պարանոցի նիհարությունը, որը դուրս է ցցել շինելի բացված օձիքակալից, իր հերթին ուժգնացնում է այդ տպավորությունը: Հուշարձանից ստացած տպավորությունները ի մի բերելով՝ հարկ է ասել, որ դա պատերազմի հանդեպ ատելությունը խորհրդանշող խորապես մարդասիրական ստեղծագործություն է: Ի դեպ, գործն այս մարմնավորված է առանց որևէ պաթոսի: Այդ հուշարձանը չի ճշում: Յեղինակը բացահայտում է պատերազմի ողբերգությունը՝ ամբողջ խորքայնությամբ ու խաղաղ խոհականությամբ. որակներ, որոնք այնպես բնորոշ են Ղուկաս Չուրաբյանի ստեղծագործությամն ընդհանրապես, բնորոշ նրա՝ մարդու հայեցակարգին:

Մեր առաջ դրված խնդրի լուծման համար, այն է՝ վեր հանել Ղուկաս Չուրաբյանի ստեղծագործության մեջ դիմանկարի հայեցակարգը, մենք քննության առանք նրա մի քանի նշանակալից գործեր, և դրանց օրինակով փորձեցինք ցույց տալ, թե ինչ առանձնահատկություններ էին բնութագրում վարպետի գեղարվեստական աշխարհայացքը, ինչպես էր նա վերաբերվում շրջակա աշխարհին, իր շուրջն եղած մարդկանց և հենց իրեն:

Անփոփելով՝ կարելի է Ղուկաս Չուրաբյանի աշխարհանաչումը որակել որպես հանդարտ ու հավասարակշռված: Մարդու մեջ նա ձգտում էր առաջին հերթին տեսնել արժանապատիվ գծերը, մարդասիրական սկզբանավորումը, այն, ինչը թույլ է տալիս նրան համարել «Աստծո պատկերով ու նմանությամբ» ստեղծված արարած: Նա բարձր էր գնահատում մարդկանց մեջ այն հատկանիշները, ինչպիսիք էին պատվի ու արժանապատվության, ներքին ազատության և անկախության զգացումները: Եվ հենց այդ գծերն էլ փորձում էր հաղորդել իր գործերին: Նա երբեք չի սկսեր ուշադրությունը մարդու բացասական հատկությունների և կամ ֆիզիկական թերությունների վրա: Նրան խոր էր նույնիսկ հեգնանքը, նույնիսկ նուրբ, բարեհոգի հումո-

րը: Մարդու հանդեպ՝ լինի պատմական հանրահայտ դեմք թե հասարակ աշխատավոր, ծեր թռչակառու թե երիտասարդ կին կամ երեխա, նա վերաբերվում էր լրջորեն ու հարգալից, բարյացական, բայց նաև առանց իդեալականացնելու ցանկության: Նրա պատկերացրած մարդու մեջ չկար ոչ մի կեղծ բան, մտացածին պաթոս, շինձու հերոսականացում, մի խոսքով՝ այն ամենը, ինչով հաճախ էին մեղանչում խորհրդային դարաշրջանի շատ նկարիչներ: Նա չէր սիրում նաև մարդկային ապրումների, ցավի պահերի, ընդգծված տառապանքի, լացուկոծի շեշտադրումը:

Նրա քանդակներն առանձնանում են առնական զավածությամբ և ներքին ուժով, հատկանիշներ, որոնք բնորոշ են ընդհանրապես հայ արվեստին: Եվ այդ իմաստով նրա արվեստն ու գեղարվեստական հայեցակարգն արտահայտում են ոչ միայն նրա ստեղծագործական անձի անհատական որակները, այլև թույլ են տալիս խոսելու դրանց մասին՝ որպես ազգային բնույթի առանձնահատկությունների, որոնք նկատելի են հայկական արվեստում՝ միջնադարից մինչև մեր օրերը:

Թարգմ. Ռ. ԱՐԴՅԱՆԻ



Ղ. Չուրաբյանի դիմանային աշխատանքը՝
«Անդմկենին», 1950թ

Conception of “Man” in Art of Ghukas Chubaryan

by NIKOLAY KOTANJYAN

In this article I will discuss the art of Ghukas Chubaryan, an outstanding Armenian sculptor of the second half of 20th century, the Peoples Artist of Armenia, and the member of USSR and Russian Academy of Arts. I will focus on the particularities of the artist's individual perception of a human image and the nature of its realization in his work.

From the great number of images created by the sculptor, I selected only a few. Among them are works of purely portrait nature as well as monuments dedicated to prominent historical figures. It is well known that the singularities in interpretation of a human image in art are invariably influenced by a number of circumstances – historical, political, social, moral, ethical and aesthetic – which defined the artist's surroundings during his lifetime. Thus, for a better appreciation of any artist's work and the contributing factors in his formation and development, it is essential to be familiar with the historical and political setting in which he had to live and work.

Ghukas Chubaryan was born in 1923 in Yerevan and died there in 2009. The larger part of his long and prolific life was spent in a country where culture, and particularly arts – as many of Armenians still remember all too well – were rather strictly controlled by state authorities.

My job today is not to discuss a nonetheless interesting and important topic of how a totalitarian regime that for more than seventy years reigned in USSR was reflected in the artist's work. This issue does not seem unequivocal to me largely because it is becoming clear that despite the ideological repression during the Soviet period a number of masters, painters, sculptors or graphic artists, produced works of art of very high caliber. Caliber that unfortunately has yet to be attained by the contemporary generation of Armenian artists who live in an environment that is seemingly more favorable to artistic freedom.

Ghukas Chubaryan belonged to a group of noted Soviet Armenian artists, whose art resisted repression by ideological censorship. Moreover, despite not only a total ideological pressure but also terrible hardships in his personal life, he was able to be

internally free in his art (as much as it was possible for that period) and to create in accordance with his civil conscience. I will attempt to answer the question of how he was able to accomplish it and what factors worked in his favor.

While the artist's ideology and therefore the nature of his interpretation of a human image was largely defined by the aforementioned circumstances, nonetheless his individuality and the nature of his personal perception of the world also played an important role in formation of his artistic identity.

Such individuality stood in opposition – sometimes explicitly, but usually implicitly – to the society's accepted behavioral norms. In a totalitarian regime such resistance was akin to a civil action embodying high moral and ethical ideals.

The future artist adopted these ideals during childhood. He was born into and brought up in a family of highly educated intellectuals, people of progressive democratic views, who possessed traditional spiritual and cultural values. His father, prominent lawyer Grigor Hambardzumi Chubaryan, famous and respected scholar and a professor of the Yerevan State University, belonged to that generation of Armenian intellectuals, who in order to fulfill their patriotic duty relocated from Russia to Armenia in 1920s in order to create Armenian republic and revive Armenian national culture.

Unfortunately, good years of Chubaryans' life were interrupted by the arrest of the head of the family in 1937. This role automatically passed to the mother, another extraordinary individual. This strong, perseverant, clever, and practical woman received her higher education in attending Moscow Distinguished Courses for Women. In the arduous conditions in which her family had found itself, she admirably managed to overcome everyday hardships while settling the family's life anew. Even more importantly, she did everything possible to protect her children (descendants of the “enemy of the state”) from psychological damages and breaking under the weight of that stigma. She saved them from feeling anger and resentment, helped them retain important positive qualities: belief in inherent human goodness,

kindness, compassion for sorrows of those close, and allow them to uphold a sense of inner freedom and independence.

These exact qualities became the foundation of quintessence of Ghukas Chubaryan, the sculptor, determined the manner of his perception of man's nature, and defined his approach to portrait work.

Let us discuss a few examples.

I will begin with one of the most expressive works in Chubaryan's art, the portrait of his mother, Martha Chubaryan (bronze, 1965).

The image of a mother (here we mean mothers specifically and not the image of motherhood) much like self-portraits is one of the most interesting themes in portrait art because of a great diversity of approaches and interpretations. As an example I will use two essentially contradictory approaches to the subject matter.

In Arshile Gorky's portrait of "Mother," with an apparent fidelity to the actual model, the image of Mother, unique in its spiritual depth, can be compared only with the most perfect of the medieval depictions of Holy Mother.

Durer's graphical portrait of his mother, known for its amazing realism and truthfulness, evokes a different emotion. Despite the outwardly unattractive, already distorted by age features, the face of an old woman is lit by an inner light and the filial love of a passionate painter.

The portrait of Chubaryan's mother in its execution in a certain way echoes that of Durer. The sculptor does not conceal his feelings towards his mother. And much like Durer, without the least of idealization he shows the face of an old woman marked by life's hardships.

This portrait is remarkable in many ways. First of all, by its vivid realistic portrayal, which is obvious even to those not familiar with the person. This truthfulness and sharpness of depiction are due to high level of skill in the art of sculpting as well the author's gift of portrayal. Naturally, the fact that he had an opportunity to observe the model in close proximity for many years helped as well.

On the other hand, this strictly individualized portrait also bears features of a collective and generalized image of a woman and a mother. It conveys all miseries, hardships and tragedies of the beginning of the 20th century: war, famine, loss, and despair. On her face we see the expression of sacrifice and love, perseverance and patience. This portrait is a testament to that time and to the biography of the sculptor himself who created this work marked with profound truth of life.

As to the artistic language of the portrait, it is simple and laconic. Its plastic structure is characterized by wholeness and lacks distracting details (as could have been the case in an execution of a haircut). The overall nature of plastic modeling gravitates to the classical techniques inherent in the artistic language of the sculptor. Thus, the sum of all mentioned qualities of this work allows us to

consider it as one of the best achievements in the portrayal art not just of the sculptor but also of the Soviet portrait art as a whole.

Concerning the execution of a human image, another work by Chubaryan is of specific interest: the monument of the prominent medieval scholar, lawyer and legislator Mkhitar Gosh (1967, basalt), located at the entrance of Matenadaran.

This sculpture exemplifies a different type of image execution associated with a complete lack of descriptive materials or a model for a portrait (notwithstanding the nickname "Gosh", meaning "bald," acquired by the scholar during his lifetime). In such cases, an image is typically created from author's imagination. The author must be guided only by an understanding that his duty is to depict a vivid historical figure whose prominent role in the history of national Armenian culture was widely known and duly appreciated by both Gosh's contemporaries and the scholars of the new time.

To this end, Ghukas Chubaryan was fortunate. With him, he had his father, who had just returned from exile and who, as mentioned before, was a brilliant legislator and knew well the history of law, and especially that of Armenia. Knowing all that was known about Gosh's life and work, he was able to convey to his son a lot about Gosh's human and creative essence. This served as a main starting point for the sculptor. Gradually, the notion of the genius individuality of Gosh started to develop in the sculptor's mind and defined the ideological conceptual basis of the future monument.

However, the search for a plastic prototype able to embody the subject lasted for a long time. And then the master had a brilliant and rather logical idea – to use his own father's face for the creation of Mkhitar Gosh. This decision proved to be quite effective. It allowed the sculptor to create a vivid in character and convincing in authenticity image of a great medieval Armenian legislator.

The plastic execution of the monument is expressive in its laconicism. Gosh's figure, clothed in a coat, depicted with very little detail, appears as a mighty column. This simplicity allowed for highlighting of two important details of the statue: the head and the hands holding a book.

Before us - an ascetic man, secluded from everything worldly, deep in thought. The gaze of his tired eyes is directed to eternity. The characteristic features of his Armenian nationality are clearly reflected in the precisely modeled features of his face. The codex in Gosh's hands is a collection of laws, which in a gesture of bequest he is offering to the viewer. It is not a coincidence that this gesture evokes an association with a canonical gesture of evangelicals presenting a book of Holy Scripture. The analogy drawn by the sculptor is clear and convincing: like Holy Scripture the codex was intended to define laws of justice and order.

Thus, in the execution of the monument to Mkhitar Gosh Chubaryan was able to organically merge two different and seemingly incompatible principles of portrait art: individuality of a



Նախագծի քննարկում, Դուբնա, 1991թ

real man with that of a collective character of a historical figure. This gave the monument a distinct force of credibility and artistic truthfulness.

The next work I would like to discuss is a sculpture called "Bunny Girl" (bazalt, 1967). The model for this work was the sculptor's daughter wearing a masquerade hat.

This is one of Chubaryan's most uncommon works. For one, it is unusual due to an unexpected plastic approach to the artistic concept. With remarkable skill the sculptor "fused" into organic whole the round head of a child and the tall hat in a shape of rabbit's head with upwardly extended ears.

Chubaryan reached such unity and realism in connecting the two creatures or natures, one of a human and another of an animal, that at first glance the viewer perceives the sculpture as depiction of some unusual unknown creature.

However, having studied the girl's face, you can observe the actual source of this remarkable character. The face is already endowed with such unique individual traits that are noted psychologically so well that even years later features of the sculpture can be easily seen in today's appearance of a young woman, who, when she was a girl, served as a model for her father.

In a precisely modeled face one can read a whole complex of psychological nuances: amazement, curiosity, inclination to suddenly smile. In a quiet and reserved way the young girl reacts to her environment but she is also ready to participate in a joyful celebration. This perception is predominantly helped by the contrast between the volume of the hat and the round form of her head, framed by thick hair, with a thin neck of a child, all of which give the portrait a dynamic steadiness and creates an impression that the girl is ready to turn her head right or left.

The open poetry inherent to this portrait is not generally characteristic to the creative search of the sculptor. It emerges very rarely and perhaps only in creation of children's images. The "Bunny Girl" is one of its most vivid examples. This wonderful composition by Chubaryan with its touching lyricism reveals yet another facet of his creative abilities, which has unfortunately been so rarely used.



Մուլվա, 1952թ, Քայստանի մշակույթի տուն

A special place in Chubaryan's portrait gallery belongs to the images of workmen. The conceptual solution of these characters is particularly fascinating.

The topic of labor was one of the most important ones in the ideological agenda of Soviet arts, since all the authority in USSR was considered as belonging to city and farm workers. Oftentimes, whole exhibitions were filled with works extolling heroic deeds of laborers and collective farmers.

This topic was not unfamiliar to Chubaryan. Having been accustomed to work since early childhood, he considered it a sacred task, so it is not surprising that he often turned to depicting laborers. The sculptor's conceptual solution of these images is characteristic to his work and is interesting from the viewpoint of the history of Armenian art.

I will stop to consider one of the most significant of such portraits known by a double name: "The Welder" or "The Knight."

The second title is rather befitting considering the particularities in the sculpture's plastic execution and its figurative meaning. The sculptor keenly noticed an unexpected similarity between a welder's shielding headpiece, which he pushed back during his work, and a helmet's visor of a knight. This became the starting point for creation of a deeply meaningful image of a workman.

"The Welder" of Ghukas Chubaryan is easily remembered first of all due to the unique, lively and attractive face of a young man with vividly expressed Armenian ethnic traits. The sculptor executed the workman's portrait in a complex and profound manner. On the young man's face we can read a discreet, almost hidden sense of pride and inner dignity. Physical power in him is fused with spiritual greatness. The firm and steady position of his head conveys his trust in himself and his strength; this man evokes a sense of trust, he is someone on whom you can rely.

Another element that attracts attention in the interpretation of the given character is an imprint of fatigue on the workman's face, which gives the depiction certain honesty and credibility. This aspect, closely related to the topic of labour and having been wonderfully expressed in works of many prominent artists, particularly those of the 19th century (e.g. Jean-François Millet, Constantin Meunier, Edgar Degas and others), was not popular in Soviet art. As people were told, labor was a "thing of pride, honor, and heroism," fatigue was not becoming of a Soviet man.

All these particularities endow "The Welder" with a complex substance thus setting it apart from many homogeneously realized portrayals of workmen and peasants in Soviet art. "The Knight's" creation serves as a good example of Chubaryan's own deeply humanitarian conception of a man that is very evident in his work.

I would like to direct your attention to the flawlessness of the plastic execution of this imaginative choice. Having generalized to the maximum the plastic forms but without it being too schematic, the sculptor achieved an impressive coherence and compactness

of the whole. The facial features are clearly defined, accessories, perfectly recognizable, are organically merged with the dimension of the face. This sculpture one of most prominent works by Chubaryan and should be considered as one of the best in its genre in Armenian art.

One of the most powerful and impressive works by Chubaryan is "Let Your Name Be Hallowed" (bronze, 1985).

This work was intended as a tribute to the memory of the author's brother, who fought and died in a battle near Leningrad at the beginning of World War II. The thought of immortalizing the memory of his brother was on the sculptor's mind for four long decades, during which time he continuously worked on numerous sketches and drafts.

In 2007 by some incredible chance, in Leningrad suburbs a research group found in a mass grave metal dog tags of Luseghen Chubaryan, Ghukas' brother. It was then that an idea was born of




Ղ. Չուբարյանը արվեստանոցում 1980-ականներ



Կնոջ՝ Սիլվայի և որդու՝ Գրիգորի հետ, 1963թ



Թամդակագործն իր «Թերլեմեզյան» ուսումնարամի ուսանողների հետ



Դ. Չուրաբյանը աշակերտների հետ

placing a memorial dedicated to the victims of Battle of Leningrad at that spot. Unfortunately, this wonderful idea of the sculptor was not realized due to the circumstances outside his control. There is a hope that one day grateful descendants will remember their heroes and place at that spot a wonderful monument, already created for this by an Armenian master.

In its figurative meaning and formal execution this monument does not have any analogies in Soviet art or, to my knowledge, in art of any other country.

In the years after World War II and even the following decades there were many sculptures erected throughout Soviet Union, all dedicated to the victory over Fascism, huge monuments in largest cities and relatively more modest sculptures in smaller towns and villages. As a rule, they depicted heroic acts of Soviet combatants who saved their people from Fascists. Oftentimes these monuments

